

«Թեւ-Սեւ» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2017թ. համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Թել-Սել» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Թել-Սել» ՓԲԸ-ի (Ընկերություն) և վերջինիս դուստր կազմակերպությունների (Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս համախմբված գործունեության արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԻ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԻ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Այլ հանգամանքներ

Խմբի 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2017թ. հունիսի 30-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Խումբը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:



- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի, կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Մեր անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն
KPMG
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
29 հունիսի 2018թ.



հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	256,264	251,324
Ոչ նյութական ակտիվներ	10	47,043	58,904
Գուդվիլ	11	1,157,700	1,157,700
Կանխավճարներ		8,770	400
Հետաձգված հարկային ակտիվներ	8	36,166	27,926
Ոչ ընթացիկ ակտիվներ		1,505,943	1,496,254
Պաշարներ	12	59,207	62,166
Տրված փոխառություններ	13	63,288	20,900
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	294,661	266,995
Ընթացիկ հարկային ակտիվներ		1,555	1,555
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	3,186,071	1,637,708
Ընթացիկ ակտիվներ		3,604,782	1,989,324
Ընդամենը ակտիվներ		5,110,725	3,485,578
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	16	150,000	150,000
Զբաղիված շահույթ		457,209	456,299
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ		607,209	606,299
Զվերահսկվող բաժնեմասեր	17	11,889	11,889
Ընդամենը սեփական կապիտալ		619,098	618,188
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	1,140,259	56,221
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	20	66,039	119,290
Ոչ ընթացիկ պարտավորություններ		1,206,298	175,511
Վարկեր և փոխառություններ	19	57,423	536,081
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	20	3,156,991	2,130,217
Ընթացիկ հարկային պարտավորություններ		70,915	25,581
Ընթացիկ պարտավորություններ		3,285,329	2,691,879
Ընդամենը պարտավորություններ		4,491,627	2,867,390
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		5,110,725	3,485,578

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Թել-Սել» ՓԲԸ
 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
 համախմբված հաշվետվություն 2017թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2017թ.	2016թ.
Հասույթ	5	2,700,018	2,279,265
Գործակալներին վճարված միջնորդավճարներ		(760,522)	(518,357)
Այլ եկամուտ	6 (ա)	151,865	205,157
Աշխատակազմի գծով ծախսեր		(546,144)	(509,136)
Վարձակալության գծով ծախսեր	6 (բ)	(388,518)	(364,269)
Մաշվածություն և ամորտիզացիա		(115,953)	(124,300)
Կանխիկի փոխադրման ծախսեր		(56,967)	(83,797)
Աջակցման և սպասարկման ծախսեր		(93,296)	(84,240)
Այլ ծախսեր	6 (գ)	(295,032)	(190,606)
Գործառնական գործունեության արդյունքներ		595,451	609,717
Ֆինանսական եկամուտ		23,469	19,865
Ֆինանսական ծախսեր		(45,510)	(94,639)
Զուտ ֆինանսական ծախսեր	7	(22,041)	(74,774)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		573,410	534,943
Շահութահարկի գծով ծախս	8	(122,500)	(120,396)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		450,910	414,547
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ վերագրելի			
Ընկերության սեփականատերերին		450,910	430,670
Չվերահսկող բաժնեմասերին		-	(16,123)
		450,910	414,547

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2018թ. հունիսի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արամ Ազատյան
 Գլխավոր տնօրեն



Արթուր Թորոսյան
 Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ընկերության սեփականատերերին վերագրելի				Ընդամենը սեփական կապիտալ
	Բաժնետիրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը	Զվերահսկվող բաժնեմասեր	
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	150,000	475,629	625,629	28,012	653,641
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Շահույթ տարվա համար	-	430,670	430,670	(16,123)	414,547
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	430,670	430,670	(16,123)	414,547
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ					
Շահաբաժիններ	-	(450,000)	(450,000)	-	(450,000)
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	-	(450,000)	(450,000)	-	(450,000)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	150,000	456,299	606,299	11,889	618,188
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	150,000	456,299	606,299	11,889	618,188
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար					
Շահույթ տարվա համար	-	450,910	450,910	-	450,910
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	450,910	450,910	-	450,910
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ					
Շահաբաժիններ	-	(450,000)	(450,000)	-	(450,000)
Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ	-	(450,000)	(450,000)	-	(450,000)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	150,000	457,209	607,209	11,889	619,098

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ծնթգ.	2017թ.	2016թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված միջնորդավճարներ		2,147,475	1,884,754
Վճարված միջնորդավճարներ		(714,994)	(519,965)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		130,142	171,457
Մուտքեր մատուցված այլ ծառայություններից		78,302	94,495
Ստացված այլ եկամուտ		22,025	25,924
Վճարումներ աշխատակիցներին		(520,015)	(497,559)
Վճարված այլ ծախսեր		(737,775)	(725,022)
Ստացված տոկոսներ		12,217	12,217
Վճարված տոկոսներ		(39,956)	(63,978)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի		(46,926)	(20,370)
Գործառնական պարտավորությունների աճ			
Օպերատորներին վճարվելիք գումարներ		1,217,225	505,783
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ		38,009	17,031
Գործակալներից ստացված կանխավճարներ		44,171	42,334
Բաժնետոմսերի ձեռքբերման համար ստացված կանխավճարի նվազում		-	264,170
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր նախքան շահութահարկի վճարումը		1,629,900	1,191,271
Վճարված շահութահարկ		(85,431)	(81,385)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		1,544,469	1,109,886
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից		32,073	157
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(149,433)	(63,013)
Տրված փոխառություններ		(91,301)	(44,195)
Տրված փոխառությունների մարում		46,340	27,120
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(162,321)	(79,931)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր վարկերից և փոխառություններից		1,469,363	-
Վարկերի և փոխառությունների մարում		(1,028,340)	(484,678)
Վճարված շահաբաժիններ		(283,408)	(348,750)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ		157,615	(833,428)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		1,539,763	196,527
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ		1,637,708	1,431,091
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		8,600	10,090
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	15	3,186,071	1,637,708

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծանոթագրություն	Էջ	Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու կազմակերպություն	11	17. Չվերահսկվող բաժնեմասեր	23
2. Հաշվառման հիմունքներ	12	18. Կապիտալի կառավարում	24
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	12	19. Վարկեր և փոխառություններ	25
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	12	20. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	26
5. Հասույթ	13	21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	27
6. Եկամուտ և ծախսեր	13	22. Դուստր կազմակերպություններ	34
7. Զուտ ֆինանսական ծախսեր	15	23. Գործառնական վարձակալություն	34
8. Շահութահարկ	15	24. Պայմանական դեպքեր	34
9. Հիմնական միջոցներ	17	25. Կապակցված կողմեր	35
10. Ոչ նյութական ակտիվներ	18	26. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	36
11. Գուդվիլ	19	27. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	46
12. Պաշարներ	20		
13. Տրված փոխառություններ	21		
14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	21		
15. Դրամական միջոցներ և դրանց փոխարժեքներ	22		
16. Կապիտալ և պահուստներ	22		

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու հարկային խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և գործունեությունը

«Թել-Մել» ՓԲԸ-ն (Ընկերություն) և վերջինիս դուստր կազմակերպությունները (Խումբ) հանդիսանում են փակ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն 2007թ-ին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: 2007թ. հուլիսի 24-ին Ընկերությունը ստացել է դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- վճարումների ընդունման ծառայությունների մատուցումը, օրինակ՝ վերջնական օգտագործողների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունում ծառայություններ մատուցողների (Օպերատորների) անունից իր սեփական և Գործակալների տերմինալների միջոցով,
- դրամական փոխանցումներ,
- կանխիկացման ծառայություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փակուղի 8:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում 8 մասնաճյուղերի և ավելի քան 1800 վճարային տերմինալների միջոցով: Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության բաժնետերերն են՝ Lendasy Trading Ltd (56.28%), Արամ Սարգսյանը (37.91%) և Տաթևիկ Ավետիսյանը (5.81%): Խմբի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում Վոլիս Կիրնիցկայան:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

2. Հաշվառման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Խմբի ընկերությունների ֆունկցիոնալ արժույթը և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշվում է այլ տեղեկատվություն:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Առավել կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ձևավորվել են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ և նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ինչպես նաև այն ենթադրությունների և գնահատումների անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարում էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է ծանոթագրություն 11-ում՝ գուղվիլի արժեզրկման ստուգման համար կիրառվող առանցքային ենթադրությունների հետ կապված:

Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնհատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

5. Հասույթ

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Միջնորդավճարներ վճարների ընդունումից	2,517,896	2,164,018
Հասույթ մատուցված ծառայություններից	105,040	102,975
Միջնորդավճարներ կանխիկացման ծառայություններից	53,790	-
Միջնորդավճարներ դրամական փոխանցումներից	10,499	2,598
Այլ հասույթ	12,793	9,674
Ընդամենը հասույթ	2,700,018	2,279,265

6. Եկամուտ և ծախսեր

(ա) Այլ եկամուտ

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Ջուտ եկամուտ արտարժույթի արք ու վաճառքի գործառնություններից	130,142	171,457
Եկամուտ պաշարների վաճառքից	7,792	4,530
Օգուտ հիմնական միջոցների օտարումից	4,301	1,360
Այլ	9,630	27,810
	151,865	205,157

(բ) Վարձակալության գծով ծախսեր

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Տարածքի վարձակալություն տերմինալների համար	313,926	296,412
Այլ ծախսեր վարձակալության գծով	74,592	67,857
	388,518	364,269

(գ) Այլ ծախսեր

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Գովազդ և շուկայավարում	87,135	26,622
Արտաքին կազմակերպությունների ծառայություններ	30,525	17,497
Կոմունալ և կապի ծառայություններ	22,119	21,413
Հաճախորդների սպասարկում	18,813	6,010
Բանկային ծառայությունների ծախսեր	17,491	18,592
Պրոցեսինգային համակարգի սպասարկում	16,520	4,100
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	15,801	11,400
Պաշարների արժեքի նվազում	14,628	-
Մասնագիտական ծառայություններ	11,943	5,976
Փոխադրման ծախսեր	8,471	570
Գրասենյակային պիտույքներ	5,968	4,940
Ապահովագրություն	4,890	226
Անվտանգություն	3,882	3,272
Պահանջներ	1,616	4,923
Ոչ նյութական ակտիվների արժեքի նվազում	-	26,628
Այլ	35,230	38,437
	295,032	190,606

7. Զուտ ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	11,252	15,428
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների գծով	10,331	4,437
Տոկոսային եկամուտ տրված փոխառությունների գծով	1,886	-
Ֆինանսական եկամուտ	23,469	19,865
Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով	(39,654)	(93,092)
Ֆինանսական ակտիվների արժեզրկում	(5,856)	(1,547)
Ֆինանսական ծախսեր	(45,510)	(94,639)
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	(22,041)	(74,774)

8. Շահութահարկ

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով:

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	(130,740)	(135,422)
	(130,740)	(135,422)
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	8,240	15,026
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	(122,500)	(120,396)

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2017թ.		2016թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	573,410	100%	534,943	100%
Շահութահարկը՝ կիրառելի հարկային դրույքով	(114,682)	(20%)	(106,989)	(20%)
Զնվազեցվող ծախսեր	(7,818)	(1%)	(13,407)	(3%)
	(122,500)	(21%)	(120,396)	(23%)

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

հազ. դրամ	Ակտիվներ	
	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Հիմնական միջոցներ	10,196	12,914
Տրված փոխառություններ	1,115	595
Պաշարներ	2,926	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	7,343	6,390
Վարկեր և փոխառություններ	3,189	3,189
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	11,397	4,838
Զուտ հարկային ակտիվներ	36,166	27,926

(գ) Հետաձգված հարկի մնացորդների շարժ

հազ. դրամ	1 հունվարի 2017թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2017թ.
Հիմնական միջոցներ	12,914	(2,718)	10,196
Պաշարներ	-	2,926	2,926
Տրված փոխառություններ	595	520	1,115
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	6,390	953	7,343
Վարկեր և փոխառություններ	3,189	-	3,189
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	4,838	6,559	11,397
Զուտ հարկային ակտիվներ	27,926	8,240	36,166

հազ. դրամ	1 հունվարի 2016թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2016թ.
Հիմնական միջոցներ	2,486	10,428	12,914
Տրված փոխառություններ	-	595	595
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	5,526	864	6,390
Վարկեր և փոխառություններ	-	3,189	3,189
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	4,888	(50)	4,838
Զուտ հարկային ակտիվներ	12,900	15,026	27,926

9. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Կանխիկի պրոցեսինգի սարքավորումն.	Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ	Տնտեսական միջոցներ	Փոխադրա- միջոցներ	Վարձակալված հիմն. միջոցների բարելավումներ	Ընդամենը
Մկրբնական արժեք						
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	522,507	82,764	44,751	13,511	2,938	666,471
Ավելացումներ	34,475	7,205	4,919	7,501	-	54,100
Օտարումներ	(39,113)	(706)	(122)	-	-	(39,941)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	517,869	89,263	49,548	21,012	2,938	680,630
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	517,869	89,263	49,548	21,012	2,938	680,630
Ավելացումներ	65,915	28,202	8,280	1,617	23,010	127,024
Օտարումներ	(22,681)	-	-	(4,606)	-	(27,287)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	561,103	117,465	57,828	18,023	25,948	780,367
Մաշվածություն						
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	288,234	45,202	20,497	9,442	571	363,946
Տարվա մաշվածություն	76,258	14,000	8,213	1,956	979	101,406
Օտարումներ	(35,239)	(706)	(101)	-	-	(36,046)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	329,253	58,496	28,609	11,398	1,550	429,306
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	329,253	58,496	28,609	11,398	1,550	429,306
Տարվա մաշվածություն	75,207	14,920	8,157	1,834	1,104	101,222
Օտարումներ	(3,113)	-	-	(3,312)	-	(6,425)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	401,347	73,416	36,766	9,920	2,654	524,103
Հաշվեկշռային արժեք						
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	234,273	37,562	24,254	4,069	2,367	302,525
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	188,616	30,767	20,939	9,614	1,388	251,324
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	159,756	44,049	21,062	8,103	23,294	256,264

Գրավային ապահովություն

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,911 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2016թ-ին՝ 19,524 հազար դրամ) կանխիկի պրոցեսինգի սարքավորումները գրավադրված են վարկերի և փոխառությունների դիմաց (ծանոթագրություն 19):

10. Ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Մկզբնական արժեք			
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	82,794	12,038	94,832
Ավելացումներ	40,938	1,596	42,534
Օտարումներ	(29,575)	(1,067)	(30,642)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	94,157	12,567	106,724
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	94,157	12,567	106,724
Ավելացումներ	1,570	1,300	2,870
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	95,727	13,867	109,594
Ամորտիզացիա			
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	29,611	2,107	31,718
Տարվա ամորտիզացիա	19,802	3,092	22,894
Օտարումներ	(6,292)	(500)	(6,792)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	43,121	4,699	47,820
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	43,121	4,699	47,820
Տարվա ամորտիզացիա	12,581	2,150	14,731
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	55,702	6,849	62,551
Հաշվեկշռային արժեք			
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	53,183	9,931	63,114
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	51,036	7,868	58,904
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	40,025	7,018	47,043

11. Գուղվիլ

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
«Մեգա Պանտերա» ՍՊԸ-ի ձեռքբերման գուղվիլ	1,077,950	1,077,950
«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ի ձեռքբերման գուղվիլ	79,750	79,750
	1,157,700	1,157,700

(ա) Գուղվիլ պարունակող դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգում

Արժեզրկման ստուգման նպատակով գուղվիլը բաշխվում է Խմբի ընդհանուր գործառնություններին: Խումբը չունի ավելի փոքր դրամաստեղծ միավոր, որի միջոցով հնարավոր կլիներ վերահսկել գուղվիլը ներքին կառավարչական նպատակների համար:

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը հիմնված է վերջինիս օգտագործման արժեքի վրա, որը որոշվել է գեղջելով Խմբի շարունակվող գործառնություններից առաջացող ապագա դրամական միջոցների հոսքերը: Որոշվել է, որ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի բարձր է վերջինիս հաշվեկշռային արժեքից և արժեզրկումից կորուստ չի ճանաչվել:

Դրամական միջոցների զեղչված հոսքերի կանխատեսումների համար կիրառվող առանցքային ենթադրություններ

Փոխհատուցվող գումարները որոշելու համար կիրառվող հիմնական ենթադրություններն են՝ զեղչի դրույքը, վերջնական արժեքի աճի տեմպերը և նախքան շահութահարկով հարկումը և մաշվածության ու ամորտիզացիայի մասհանումները շահույթի (EBITDA) սահամանաչափերը: Այդ ենթադրությունները ներկայացված են ստորև:

Տոկոսներով	2017թ.
Զեղչի դրույք	16.7%
Վերջնական արժեքի աճի տեմպեր	4.0%
Բյուջեով նախատեսված EBITDA-ի աճի տեմպեր (միջինը հաջորդ հինգ տարիների համար)	0.2%

(i) Զեղչի դրույք

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշելու համար կիրառվել է 16.7% հարկումից հետո զեղչի դրույք: Զեղչի դրույքը որոշվել է հիմք ընդունելով նախկին փորձը և տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը, որը հիմնված է պարտքի օգտագործման 23.8% հնարավոր տիրույթի վրա՝ 12.3% շուկայական տոկոսադրույքով:

(ii) Վերջնական արժեքի աճի տեմպերը

Զեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելում ներառված են դրամական միջոցների հոսքերի հինգ տարվա կանխատեսումները: Որոշվել է 4% երկարաժամկետ աճի դրույք, որն իրենից ներկայացնում է Հայաստանի գնաճի կանխատեսումները երկարաժամկետ կտրվածքով:

(iii) Բյուջեով նախատեսված EBITDA-ի աճ

Բյուջեով նախատեսված EBITDA-ն արտահայտվում է որպես հնգամյա բիզնես ծրագրերի առաջին տարիների ընդհանուր տարեկան աճի տեմպ, որն օգտագործվում է արժեզրկման ստուգման համար և հիմնված է նախկին փորձի վրա՝ հետևյալի հետ կապված ճշգրտումով.

- Ենթադրվում է, որ առաջին երկու տարիների ընթացքում վաճառքից ստացվող միջնորդավճարները և այլ աղբյուրներից ստացվող հասույթը կցուցաբերեն կայուն բարձ աճ գնաճի մակարդակից և հետագա տարիներին կաճեն միայն գնաճի դրույքի չափով:
- Բիզնես ծրագրի առաջին երկու տարիների արտադրական ծախսերը կանխատեսվել են հիմք ընդունելով 2017թ. նույն աճի տեմպերը: 2019-2022թթ. դրամական միջոցների հոսքերի կանխատեսումներում ներառված կանխատեսվող տարեկան աճն ըստ գնահատումների համապատասխանում է երկրի գնաճի դրույքին:

(iv) Զգայունությունը ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ

Դրամաստեղծ միավորի գնահատված փոխհատուցվող գումարը գերազանցում է վերջինիս հաշվեկշռային արժեքը մոտ 75,327 հազար դրամով: Ղեկավարությունը բացահայտել է երկու հիմնական ենթադրություններ, որոնց փոփոխությունը ողջամտորեն հնարավոր է և որի արդյունքում հաշվեկշռային արժեքը կարող է գերազանցել փոխհատուցվող գումարը: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է այդ երկու ենթադրություններով առանձին հիմունքով պահանջվող փոփոխության չափը, որի դեպքում գնահատված փոխհատուցվող գումարը հավասար լինի հաշվեկշռային արժեքին:

Տոկոսներով	Փոփոխություն, որը պահանջվում է, որպեսզի հաշվեկշռային արժեքը հավասարվի փոխհատուցվող գումարին	
	2017թ.	
Զեղչի դրույք		0.59%
Վերջնական արժեքի աճի տեմպեր		(0.3)%

12. Պաշարներ

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Պահեստամասեր	55,012	51,308
Վառելիք	550	879
Այլ	3,645	9,979
	59,207	62,166
Պաշարների արժեքի նվազում ընթացիկ տարում	14,628	-

13. Տրված փոխառություններ

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Կապակցված կողմերին տրված գրավով չապահովված փոխառություններ	39,900	18,200
Այլ կողմերին տրված գրավով չապահովված փոխառություններ	14,081	-
Աշխատակիցներին տրված գրավով չապահովված փոխառություններ	9,307	2,700
	63,288	20,900

Այլ կողմերին տրված գրավով չապահովված փոխառությունների համար գործում է 12%, մնացած տրված փոխառությունների համար տոկոսադրույք չի կիրառվում:

Պարտքային և արտարժույթի ռիսկերին Խմբի ենթարկվածության և տրված փոխառությունների գծով արժեզրկումից կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Առևտրական դեբիտորական պարտքեր վճարային ծառայությունների գծով	181,483	172,136
Առևտրական դեբիտորական պարտքեր դրամական փոխանցումների գծով	23,186	5,211
Այլ առևտրական դեբիտորական պարտքեր	35,251	14,498
Ընդամենը առևտրական դեբիտորական պարտքեր	239,920	191,845
Տրված կանխավճարներ	48,708	71,074
Բյուջեից ստացվելիք գումարներ	5,791	2,973
Այլ դեբիտորական պարտքեր	242	1,103
Ընդամենը այլ դեբիտորական պարտքեր	54,741	75,150
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	294,661	266,995

Պարտքային և արտարժույթի ռիսկերին Խմբի ենթարկվածության և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

15. Դրամական միջոցներ և դրանց փոխարժեքներ

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Կանխիկը դրամարկղում	671,980	12,517
Կանխիկը տերմինալներում	644,069	470,053
Կանխիկը ճանապարհին	234,771	573,096
Բանկային հաշիվների մնացորդներ		
- 5 խոշոր հայկական բանկեր	1,035,563	364,470
- այլ հայկական բանկեր	565,096	40,575
- այլ ոչ տեղական բանկեր (առանց վարկանիշի)	34,592	176,997
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություններում	3,186,071	1,637,708

Տոկոսադրույքի ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

16. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ

	Սովորական բաժնետոմսեր	
	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	150,000	150,000
Հայտարարված բաժնետոմսեր – անվանական արժեք	1,000 դրամ	1,000 դրամ

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության և վերջինիս դուստր կազմակերպությունների բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2017թ. ընթացքում Ընկերությունը հայտարարել է 450,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2016թ-ին՝ 450,000 հազար դրամ) և վճարել է 283,408 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2016թ-ին՝ 348,750 հազար դրամ): Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմում է 3,000 հազար դրամ (2016թ-ին՝ 3,000 հազար դրամ):

17. Չվերահսկվող բաժնեմասեր

Ստորև բերվող աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն նախքան ներխափային բացառումներն էական չվերահսկվող բաժնեմաս ունեցող Խմբի դուստր կազմակերպության վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2017թ.

հազ. դրամ	«Մեգա Պանտերա» ՍՊԸ	Ներխափային բացառումներ	Ընդամենը
Չվերահսկվող բաժնեմասի տոկոսը	50%		
Ոչ ընթացիկ ակտիվներ	20,544		
Ընթացիկ ակտիվներ	3,244		
Զուտ ակտիվներ	23,788		
Չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեք	11,889	-	11,889
Ընդամենը համապարփակ եկամուտ	-		
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ	-		

31 դեկտեմբերի 2016թ.

հազ. դրամ	«Մեգա Պանտերա» ՍՊԸ	Ներխափային բացառումներ	Ընդամենը
Չվերահսկվող բաժնեմասի տոկոսը	50%		
Ոչ ընթացիկ ակտիվներ	20,544		
Ընթացիկ ակտիվներ	3,244		
Զուտ ակտիվներ	23,788		
Չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեք	11,889	-	11,889
Վնաս	(32,346)		
Ընդամենը համապարփակ վնաս	(32,346)		
Չվերահսկվող բաժնեմասին բաշխված վնաս	(16,123)		
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ	-		

18. Կապիտալի կառավարում

Խորհրդի քաղաքականությամբ պահանջվում է ապահովել կապիտալի կայուն բազա ներդրողների, վարկատուների և շուկայի վստահությունը պահպանելու և բիզնեսի հետագա զարգացումն ապահովելու համար: Տնօրենների խորհուրդը վերահսկում է կապիտալի եկամտաբերությունը, որը Խմբի կողմից որոշվում է որպես գործառնական գործունեության արդյունքի և ընդհանուր սեփական կապիտալի (առանց չվերահսկվող բաժնեմասի) հարաբերակցություն: Տնօրենների խորհուրդը վերահսկում է նաև սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վճարվող շահաբաժինների մակարդակը:

Խումբը վերահսկում է կապիտալը՝ օգտագործելով ճշգրտված գուտ պարտքի հարաբերակցությունը սեփական կապիտալին: Այդ նպատակով ճշգրտված գուտ պարտքը սահմանվում է որպես պարտավորությունների ընդհանուր գումար, որը ներառում է տոկոսային վարկերը և փոխառությունները՝ հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ստորև ներկայացված է 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ճշգրտված գուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը:

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Ընդամենը պարտավորություններ	4,491,627	2,867,390
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	3,186,071	1,637,708
Զուտ պարտք	1,305,556	1,229,682
Ընդամենը սեփական կապիտալ	619,098	618,188
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	0.47	0.50

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման գծով Խմբի մոտեցումը չի փոփոխվել:

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վճարային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վճարային կազմակերպությունների նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 100,000 հազար դրամ (2016թ-ին՝ 100,000 հազար դրամ): 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափը: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն այլ օրենսդրական պահանջներ:

19. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	800,526	38,431
Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	339,733	-
Գրավով ապահովված փոխառություններ այլ կողմերից	-	17,790
	1,140,259	56,221
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկերի ընթացիկ մաս	-	462,070
Կապակցված կողմերից ստացված գրավով չապահովված փոխառությունների ընթացիկ մաս	1,041	47,130
Այլ կողմերից ստացված գրավով ապահովված փոխառությունների ընթացիկ մաս	17,869	26,881
Այլ կողմերից ստացված գրավով չապահովված փոխառությունների ընթացիկ մաս	38,513	-
	57,423	536,081
	1,197,682	592,302

(ա) Մարման պայմանները և ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառություններ համար գործող պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ. տոկոսադր.	Մարման տարի	31 դեկտեմբերի 2017թ.		31 դեկտեմբերի 2016թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով ապահովված բանկային վարկ 1	ՀՀ դրամ	2%	2019	800,526	800,526	-	-
Գրավով ապահովված բանկային վարկ 2	ԱՄՆ դոլար	11%	2018	-	-	500,501	500,501
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմերից 1	ՀՀ դրամ	11%	2019	306,936	306,936	-	-
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմերից 2	ՀՀ դրամ	0%	2019	32,797	32,797	-	-
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմերից 3	ԱՄՆ դոլար	10%	2018	1,041	1,041	47,130	47,130
Գրավով ապահովված փոխառություն այլ կողմից	ՀՀ դրամ	11%	2018	17,869	17,869	44,671	44,671
Գրավով չապահովված փոխառություն այլ կողմից	ԱՄՆ դոլար	11%	2018	38,513	38,513	-	-
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				1,197,682	1,197,682	592,302	592,302

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բաժնետոմսերի 100%-ը գրավադրված է գրավով ապահովված բանկային վարկ 1 և գրավով ապահովված բանկային վարկ 2 դիմաց: Բացի այդ, դրամական միջոցները պահվում են այն բանկում, որը տրամադրել է գրավով ապահովված բանկային վարկ 1-ը և ըստ էության ծառայում են որպես ապահովություն այդ վարկի համար:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,911 հազար դրամ (2016թ-ին՝ 19,524 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով կանխիկի պրոցեսինգի սարքավորումները գրավադրված են այլ կողմից ստացված գրավով ապահովված փոխառության դիմաց (ծանոթագրություն 9):

(բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	Վարկեր և փոխառություններ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	592,302
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված	
Մուտքեր վարկերից և փոխառություններից	1,469,363
Վարկերի և փոխառությունների մարում	(1,028,340)
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված	441,023
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցություն	(1,938)
Հայտարարված շահաբաժիններից ստացված փոխառություններ	166,597
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախս	39,654
Վճարված տոկոսներ	(39,956)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,197,682

20. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2017թ.	31 դեկտեմբերի 2016թ.
Օպերատորներին վճարվելիք գումարներ	2,694,429	1,922,564
Գործակալներին վճարվելիք գումարներ	105,742	60,244
Այլ առևտրական կրեդիտորական պարտքեր	79,332	31,289
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ	164,030	126,021
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	50,633	27,706
Ընդամենը առևտրական կրեդիտորական պարտքեր	3,094,166	2,167,824
Ստացված կանխավճարներ	108,125	63,953
Պետական բյուջե վճարվելիք գումարներ	20,739	17,730
Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր	128,864	81,683
Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	3,223,030	2,249,507
Ընթացիկ	66,039	119,290
Ոչ ընթացիկ	3,156,991	2,130,217

Օպերատորներին վճարվելիք գումարներն իրենցից ներկայացնում են Օպերատորների անունից ընդունված վճարները, որոնք չեն փոխանցվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Հաշվապահական դասակարգումներ և իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբն ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (ծանոթագրություն 22 (բ) (ii)),
- իրացվելիության ռիսկ (ծանոթագրություն 22 (բ) (iii)),
- շուկայական ռիսկ (ծանոթագրություն 22 (բ) (iv)):

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Տնօրենների խորհուրդը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները:

Խմբի ներքին աուդիտի բաժինը վերահսկում է, թե ինչպես է ղեկավարությունը վերահսկում համապատասխանությունը Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի պահանջների հետ և ուսումնասիրում է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի համապատասխանությունն այն ռիսկերին, որոնց բախվում է Խումբը: Ներքին աուդիտի բաժինն իրականացնում է ռիսկերի կառավարման վերահսկողության համակարգի և ընթացակարգերի կանոնավոր և ընտրանքային ստուգումներ:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Խմբի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի գծով:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2017թ.	2016թ.
Տրված փոխառություններ	63,288	20,900
Առևտրական դեբիտորական պարտքեր	239,920	191,845
Դրամական միջոցներ և դրանց հանարժեքներ	1,870,022	1,155,138
	2,173,230	1,367,883

Տրված փոխառություններ

Խմբի քաղաքականության համաձայն՝ փոխառությունները տրամադրվում են հիմնականում կապակցված կողմերին՝ առանց գրավ պահանջելու:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև հաճախորդների բազայի կառուցվածքը, այդ թվում՝ տվյալ ոլորտի հաճախորդների և երկրի կողմից հանձն առնված պարտականությունների չկատարման ռիսկը, մասնավորապես ներկայիս վատթարացող տնտեսական պայմաններում:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի մոտ 76%-ն իրենից ներկայացնում է վճարային ծառայություններից ստացվելիք գումարները, որոնք պարտքային ռիսկի չեն ենթարկվում, քանի որ նույն պայմանագրային կողմերից ընդունված վճարների գծով վճարվելիք գումարները մի քանի անգամ գերազանցում են ստացվելիք գումարը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծանոթագրություն 20, օրպերատորներին վճարվելիք գումարներ):

Խումբը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար:

Խումբը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Խմբի գնահատականը:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ աշխարհագրական տարածքների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2017թ.	2016թ.
Հայաստանի Հանրապետություն	234,540	189,467
Այլ ԱՊՀ երկրներ	5,380	2,378
	239,920	191,845

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ պայմանագրային կողմերի:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2017թ.	2016թ.
Բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ	61,816	17,453
Կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ	19,003	20,633
Հեռահաղորդակցության ընկերություններ	80,242	108,783
Առցանց խաղեր	48,412	21,692
Առևտուր	17,551	12,904
Այլ	12,896	10,380
	239,920	191,845

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի 10 ամենախոշոր հաճախորդներին բաժին է ընկնում առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքի 146,700 հազար դրամը (2016թ-ին՝ 132,763 հազար դրամ):

Ստորև ներկայացված է այն առևտրական և այլ դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը, որոնք արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ:

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված	151,272	96,337
0- 30 օր ժամկետանց	63,224	79,873
31-120 օր ժամկետանց	12,421	14,220
121-180 օր ժամկետանց	2,704	237
Ավելի քան 180 օր ժամկետանց	10,299	1,178
	239,920	191,845

Հիմք ընդունելով պարտականությունների չկատարման նախկին ցուցանիշները՝ Խումբը գտնում է, որ չի պահանջվում պահուստի ձևավորում ոչ ժամկետանց և մինչ 30 օր ժամկետանց առևտրական դեբիտորական պարտքերի համար: Խումբն իրականացնում է արժեզրկման ստուգում առանձին հիմունքով ավելի քան 30 օր ժամկետանց առևտրական դեբիտորական պարտքերի համար:

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը տարվա ընթացքում առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով:

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	1,000	27,629
Ճանաչված արժեզրկումից կորուստ	4,256	-
Առևտրական դեբիտորական պարտքերի դիմաց դուրսգրված գումարներ	-	(26,629)
Նվազում հակադարձման արդյունքում	(1,000)	-
Մնացորդը տարեվերջի դրությամբ	4,256	1,000

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 1,870,022 հազար դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (2016թ-ին՝ 1,155,138 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Բանկային հաշիվների մնացորդները պահվում են խոշոր հայկական բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ այս բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները: Ճանապարհին գտնվող կանխիկի համար ապահովվածություն են ծառայում ստացված կանխավճարները (Գործակալների կողմից դեպոզիտացված միջոցներ, ծանոթագրություն 20), երաշխավորությունները և գրավադրված կանխիկի պրոցեսինգի սարքավորումները:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Խմբի հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չգեղջված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

31 դեկտեմբերի 2017թ.	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր						
	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի
հազ. դրամ							
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	1,197,682	1,296,401	-	52,119	55,622	1,188,660	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր	3,094,166	3,094,166	6,321	2,886,720	136,086	920	64,119
	4,291,848	4,390,567	6,321	2,938,839	191,708	1,189,580	64,119

31 դեկտեմբերի 2016թ.	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր						
	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի
հազ. դրամ							
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	592,302	631,295	-	91,871	482,314	57,110	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր	2,167,824	2,167,824	-	2,017,733	29,281	93,730	27,080
	2,760,126	2,799,119	-	2,109,604	511,595	150,840	27,080

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկին ենթարկվածությունը կապված է Խմբի կազմակերպությունների համապատասխան ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխառությունների հետ: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով, ռուսական ռուբլով և եվրոյով:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված	Եվրոյով արտահայտված	Ռուբլով արտահայտված	ԱՄՆ դոլարով արտահայտված	Եվրոյով արտահայտված	Ռուբլով արտահայտված
	2017թ.	2017թ.	2017թ.	2016թ.	2016թ.	2016թ.
Առևտրական դեբիտորական պարտքեր	1,173	615	22,897	243	-	7,298
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,068	28,136	85,584	11,396	15,012	165,965
Վարկեր և փոխառություններ	(39,554)	-	-	(547,631)	-	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(2,282)	(1,166)	-	(7,780)	(1,030)	(9,525)
Զուտ ենթարկվածություն	(16,595)	27,585	108,481	(543,772)	13,982	163,738

Տարվա ընթացքում կիրառվել են հիմնական արտարժույթների փոխարժեքները:

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Միութ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2017թ.	2016թ.	2017թ.	2016թ.
1 ԱՄՆ դոլար	482.63	480.48	484.1	483.94
1 եվրո	546.15	531.90	580.1	512.20
1 ռուսական ռուբլի	8.28	7.20	8.4	7.88

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չառնելով կանխատեսվող առք ու վաճառքի ազդեցությունը:

հազ. դրամ	Արժևորում	Արժեզրկում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2017թ.		
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ	1,660	(1,660)
ՀՀ դրամի 10% շարժ եվրոյի նկատմամբ	(2,759)	2,759
ՀՀ դրամի 10% շարժ ռուսական ռուբլու նկատմամբ	(10,848)	10,848

հազ. դրամ	Արժևորում	Արժեզրկում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2016թ.		
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ	54,377	(54,377)
ՀՀ դրամի 10% շարժ եվրոյի նկատմամբ	(1,398)	1,398
ՀՀ դրամի 10% շարժ ռուսական ռուբլու նկատմամբ	(16,374)	16,374

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածության չափը որոշող քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2017թ.	2016թ.
Ֆիքսված դրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	14,081	-
Ֆինանսական պարտավորություններ	(1,164,885)	(592,302)
	(1,150,804)	(592,302)

Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված դրույքով գործիքների համար

Խումբը ֆիքսված դրույքով ֆինանսական գործիքները չի հաշվառում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

22. Դուստր կազմակերպություններ

Ստորև ներկայացված են Խմբի դուստր կազմակերպությունները:

Անվանումը	Գրանցման երկիրը	Հիմնական գործունեությունը	Սեփականության %	
			2017թ.	2016թ.
		Ընկերության հիմնական գործունեությունը գովազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումը:		
«ԹԵԼ-ՍԵԼ ՍԵԼՎԻՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	Ընկերության հիմնական գործունեությունը	100%	100%
«ՄԷԳա Պանտերա» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	Ընկերության գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից:	50%	50%

23. Գործառնական վարձակալություն

Վարձակալություն, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ

Ընկերությունը վարձակալում է մի շարք խանութների տարածքներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության պայմանագրերը կարող են չեղյալ հայտարարվել նախապես 1-ից 2 ամիս առաջ ծանուցում ներկայացնելով:

Ապագա նվազագույն վարձավճարներ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա նվազագույն վարձավճարները հետևյալն են.

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Մինչև 2 ամիս	38,757	30,709

24. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Խումբն ապահովագրել է վճարային տերմինալները և վճարային տերմինալներում գտնվող կանխիկը: Այնուամենայնիվ, Խումբն ամբողջովին չի ապահովագրել իր մյուս հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

25. Կապակցված կողմեր

(ա) Մայր կազմակերպություն և վերջնական վերահսկող կողմ

Խմբի մայր կազմակերպությունն է Կիպրոսում գրանցված Lendasy Trading Ltd, որի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում Վոլհա Կիրնիցկայան:

Ընկերության մայր կազմակերպությունը չի ներկայացնում հանրությանը հասանելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի անդամների և ղեկավարության հետ

(i) Տնօրենների խորհրդի և ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է աշխատակազմի գծով ծախսերում:

հազ. դրամ	2017թ.	2016թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	79,712	77,539

(ii) Գործարքներ Տնօրենների խորհրդի և ղեկավարության հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը ղեկուսների 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 ղեկուսների	
	2017թ.	2016թ.	2017թ.	2016թ.
Տրված փոխառություններ	53,200	45,500	39,900	18,200
Վարկեր և փոխառություններ	172,300	-	172,612	-

Տրված փոխառությունների համար տոկոսադրույք չի գործում: Վարկերը և փոխառությունները ենթակա են մարման մինչև 2019թ.՝ 11% տոկոսադրույքով:

(գ) Գործարքներ սեփականատերերի հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը ղեկուսների 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 ղեկուսների	
	2017թ.	2016թ.	2017թ.	2016
Ստացված վարկեր և փոխառություններ				
Բաժնետերեր	166,597	-	168,162	47,130

Ստացված վարկերը և փոխառությունների ենթակա են մարման մինչև 2019թ.՝ 0% կամ 11% տոկոսադրույքով:

26. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև բերվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար և Խմբի ընկերությունների կողմից:

(ա) Համախմբման հիմունքներ

(i) Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որը Խմբին վերահսկողության իրավունքի փոխանցման ամսաթիվն է (ծանոթագրություն 26 (ա) (iii)):

Խումբը չափում է գուղվիլը ձեռքբերման ամսաթվի դրությամբ որպես՝

- փոխանցված հատուցման իրական արժեք՝ գումարած
- ձեռքբերված կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերի ճանաչված գումար՝ գումարած
- ձեռք բերվողի սեփական կապիտալում նախկին բաժնեմասի իրական արժեքը՝ ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում՝ հանած
- ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների գուտ ճանաչված գումարը (սովորաբար իրական արժեքը):

Բացասական տարբերության դեպքում զեղչով ձեռքբերումից օգուտը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխանցված հատուցումը չի ներառում այն գումարները, որոնք վերաբերում են նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը: Այս գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկմանը վերաբերող ծախսերին, որոնք Խումբը կրում է ձեռնարկատիրական գործունեության միավորումների հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

(ii) Չվերահսկվող բաժնեմասեր

Չվերահսկվող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի գուտակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Դուստր կազմակերպությունում Խմբի բաժնեմասի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում վերահսկողության կորստի, հաշվառվում են որպես բաժնային գործառնություններ:

(iii) Դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող կազմակերպություններն են: Խումբը վերահսկողություն ունի կազմակերպության նկատմամբ, երբ այդ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և կազմակերպության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպության չվերահսկող բաժնեմասերին վերագրվող վնասը բաշխվում է չվերահսկող բաժնեմասերին, եթե նույնիսկ դրա արդյունքում չվերահսկող բաժնեմասի մնացորդը դառնում է բացասական:

(iv) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

(բ) Հասույթ

(i) Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանին համամասնորեն: Ավարտվածության աստիճանը գնահատվում կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա:

(ii) Միջնորդավճարներ

Եթե գործարքում Խումբը հանդես է գալիս որպես Գործակալ, այլ ոչ որպես՝ պրինցիպալ, ապա ճանաչված հասույթն իրենից ներկայացնում է Խմբի կողմից վճարված միջնորդավճարի գուտ գումարը:

Միջնորդավճարներից ստացվող եկամուտը վերաբերում է վերջնական օգտագործողներից վճարների հավաքագրմանը ծառայություն մատուցողների («Օպերատորների») անունից, որտեղ Խումբը հանդես է գալիս որպես գործարքի Գործակալ, այլ ոչ որպես՝ պրինցիպալ: Գործակալին և պրինցիպալին տարանջատելիս ղեկավարությունը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Խմբին չի անցնում ապրանքների և ծառայությունների սեփականության իրավունքը և Խումբը պատասխանատվություն չի կրում վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների համար:
- Խումբը չի կարող փոխել մատակարարի կողմից սահմանված վաճառքի գները:

Խումբը գործում է որպես պրինցիպալ այն գործարքներում, որոնցում Գործակալները հավաքագրում են գումարները Խմբի անունից՝ օգտագործելով կանխիկի պրոցեսինգի իրենց սեփական սարքավորումները, որոնք միացված են Խմբի պրոցեսինգային համակարգին: Գործակալին և պրինցիպալին տարանջատելիս ղեկավարությունը դիտարկում է այն փաստը, որ Խումբն ամբողջական պատասխանատվություն է կրում վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների համար:

Միջնորդավճարների գծով ծախսերը վերաբերում են Խմբի և Գործակալների միջև գործող ենթագործակալական հարաբերություններին, որոնք Խումբը հաստատում է Օպերատորների նկատմամբ իր պայմանագրային պարտականությունները կատարելու համար:

(գ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսերը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(դ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Խմբի կազմակերպությունների համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ

Ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ե) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարբերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարած ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում՝

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում կատարվող ներդրումներին, այնքանով որքանով Խումբը կարող է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները, և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում,
- այն հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչման պահին:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասի, չօգտագործված հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որին հաշվին դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային հատուցումը կիրացվի: Այս նվազեցումները հակադարձվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթի առկայության հավանականությունը:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

(գ) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(ե) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է գուտ հիմունքով «Այլ եկամուտներ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբը կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Վարձակալված ակտիվների գծով մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության ժամկետից և ակտիվի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտնի է, որ Խուսիքը ձեռք կբերի ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր բաղկացուցիչների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- կանխիկի պրոցեսինգի սարքավորումներ 5 տարի,
- համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ 1-5 տարի,
- տնտեսական միջոցներ 5 տարի,
- փոխադրամիջոցներ 5-10 տարի,
- վարձակալված հիմնական միջոցների բարելավումներ 5-20 տարի:

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ը) Ոչ նյութական ակտիվներ

(i) Գուղվիլ

Գուղվիլը, որն առաջանում է դուստր կազմակերպությունների ձեռքբերման արդյունքում, չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեքկումից կորուստները:

(ii) Այլ ոչ նյութական ակտիվներ

Այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեքկումից կորուստները:

(iii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գուղվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iv) Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի, բացառությամբ գույվիլի, օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- համակարգչային ծրագրեր 10 տարի,
- լիցենզիաներ 10 տարի:

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(թ) Ֆինանսական գործիքներ

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասին:

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում

Խումբը փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Խմբի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Խումբն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ - չափում

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են ֆիքսված կամ որոշելի վճարումներով ակտիվներ, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվներն ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքկումից կորուստները:

Փոխառություններ և դեբիտորական պարտքերը ներառում են ֆինանսական ակտիվների հետևյալ դասերը՝ առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները, կանխիկը ճանապարհին և ընթացիկ բանկային հաշիվները:

(iii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում

Խումբը դատում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, այլ պարտավորությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(d) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(h) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել՝

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Խմբին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները,
- Խմբի փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ,
- արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը, կամ
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին:

(ii) Ամորտիզացվող արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության կարծիքը, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում և արտացոլվում է պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Խումբը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի

ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(iii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Օգտակար ծառայության անսահմանափակ ժամկետ ունեցող կամ շահագործման համար դեռ ոչ պիտանի ոչ նյութական ակտիվների և գուղվիլի համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր: Գուղվիլի արժեզրկման ստուգման նպատակով՝ դրամաստեղծ միավորները, որոնց բաշխվել է գուղվիլը, միավորվում են այնպես, որպեսզի արժեզրկման ստուգման մակարդակն արտացոլի այն նվազագույն մակարդակը, որում ներքին կառավարման նպատակներով գուղվիլը ենթարկվում է մոնիտորինգի: Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուղվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորների այն խմբերին, որոնք ակնկալվում է, որ օգուտներ կստանան ձեռնարկատիրական գործունեության միավորման սիներգիաներից:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են մինչև վերջիններիս ներկա արժեքը՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը բաշխվում է այնպես, որ նախ նվազեցվի դրամաստեղծ միավորին (կամ դրամաստեղծ միավորների խմբին) բաշխված գուղվիլի հաշվեկշռային արժեքը և, այնուհետև, այդ դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ համամասնորեն:

Գուղվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, պարզելու համար, թե արդյոք գոյություն ունի որևէ հայտանիշ ըստ որի արժեզրկումից կորուստը նվազել է կամ այլևս գոյություն չունի: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այնքանով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(լ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղջելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(խ) Վարձակալված ակտիվներ

Խումբը վարձակալում է մի շարք ակտիվներ գործառնական վարձկալությամբ: Վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

(ի) Վարձակալության գծով վճարներ

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսիչ գումարները ճանաչվում են որպես վարձակալության գծով կատարած ընդհանուր վճարների բաղկացուցիչ մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(ծ) Համադրելի տեղեկատվություն

Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է ընթացիկ տարվա ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու համար: 2017թ. ընթացքում Խումբը փոփոխություն է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ ծախսերը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում գործառույթի փոխարեն ըստ բնույթի ներկայացնելու համար: Ղեկավարությունը գտնում է, որ ծախսերի ներկայացումն ըստ բնույթի թույլ է տալիս տրամադրել առվելի տեղին տեղեկատվություն:

27. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ գործում են 2017թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Խմբի գործունեության վրա: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Ակնկալվում է, որ ստորև ներկայացված ստանդարտներն էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակաշրջանում:

(ա) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Նոր մոդելի կիրառումը պահանջում է էական դատողություններ այն մասին, թե ինչպես են տնտեսական գործոններն ազդում սպասվող պարտքային վնասի վրա, որը որոշվում է առաջացման հավանականության գնահատմամբ:

Արժեզրկման նոր մոդելը կկիրառվի ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նկատմամբ, բացառությամբ բաժնային գործիքներում ներդրումների, ինչպես նաև պայմանագրային ակտիվների նկատմամբ:

ՖՀՄՍ 9 համաձայն՝ վնասի գծով պահուստները կչափվեն հետևյալ հիմունքներից որևէ մեկով.

- *12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս.* սա այն սպասվող պարտքային վնասն է, որն առաջանում է ֆինանսական գործիքների գծով պարտավորությունների չկատարման ռեպրերի արդյունքում, որոնք հնարավոր են հաջորդ 12 ամիսների ընթացքում, և
- *ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս.* սա այն սպասվող պարտքային վնասն է, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր ռեպրերի արդյունքում, որոնք կարող են տեղի ունենալ ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ողջ ժամկետի ընթացքում:

Ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասի չափումը կիրառվում է այն դեպքում, երբ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկն էականորեն ավելացել է սկզբնական ճանաչման պահից: Հակառակ դեպքում կիրառվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասի չափումը: Խումբը կարող է որոշել, որ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկն էականորեն չի աճել, եթե ակտիվն ունի ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասի չափումը միշտ կիրառվում է առևտրական դեբիտորական պարտքերի և նշանակալի ֆինանսական բաղադրիչ չապարունակող պայմանագրերի գծով ակտիվների համար:

Խմբի գնահատմամբ ՖՀՄՍ 9-ով սահմանված արժեզրկմանը վերաբերող պահանջների կիրառումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չի հանգեցնի արժեզրկումից լրացուցիչ էական կորուստների ճանաչմանը:

(i) Դասակարգում – Ֆինանսական պարտավորություններ

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական պարտավորությունների դասակարգման պահանջները:

Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 39-ի համաձայն այն ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները, որոնք դասվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքների դասին, ճանաչվում են շահույթում կամ վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն, իրական արժեքի այս փոփոխությունները ընդհանուր առմամբ ներկայացվում են հետևյալ կերպ.

- պարտավորության գծով պարտքային ռիսկի փոփոխություններին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, իսկ
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը ներկայացվում է շահույթի կամ վնասի կազմում:

Խումբը չի նախատեսել որևէ ֆինանսական պարտավորություն որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիք և չունի նման մտադրություն ներկա պահին: Խմբի գնահատմամբ ֆինանսական պարտավորությունների դասակարգումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա:

(ii) Բացահայտումներ

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ կպահանջվեն մանրամասն նոր բացահայտումներ հատկապես պարտքային ռիսկի և սպասվող պարտքային վնասի հետ կապված: Գնահատման ընթացքում Խումբը կատարել է վերլուծություն նպատակ ունենալով բացահայտել բացակայող տեղեկատվությունը: Խումբը գտնվում է համակարգերի և վերահսկողության մեխանիզմների փոփոխությունների ներդրման գործընթացում, որոնք, Խմբի կարծքիով, անհրաժեշտ կլինեն պահանջվող տեղեկատվության առկայությունն ապահովելու համար:

(iii) Մնացումը նոր ստանդարտին

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում կատարվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններն ընդհանուր առմամբ կկիրառվեն հետընթաց, բացառությամբ ստորև ներկայացված դեպքերի:

Խումբը կօգտվի այն բացառությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համադրելի տվյալները դասակարգման և չափման (ներառյալ՝ արժեքկման) փոփոխությունների հետ կապված: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերություններն ընդհանուր առմամբ կձանաչվեն չբաշխված շահույթի և պահուստների կազմում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

(բ) ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերի գծով հասույթ»

ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ձանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինում է հասույթի ձանաչման ներկայումս գործող ուղեցույցները, ներառյալ՝ ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» ուղեցույցները:

(i) Ծառայությունների մատուցում

Խումբը մատուցում է գովազդի, աջակցման, սպասարկման և հարակից ծառայություններ: Եթե մեկ համաձայնագրի շրջանակներում ծառայությունները մատուցվում են տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, հատուցումը բաշխվում է տարբեր ծառայությունների իրական արժեքին համամասնորեն: Ներկայումս հասույթը ձանաչվում է ավարտավածության աստիճանի մեթոդով:

ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ ծառայությունների մատուցման պայմանագրերով նախատեսված հատուցման ընդհանուր գումարը կբաշխվի բոլոր մատուցվող ծառայություններին՝ ելնելով վերջիններիս առանձին վաճառքի գներից: Առանձին վաճառքի գները կորոշվեն հիմք ընդունելով գնացուցակի գները, որոնցով Խումբը վաճառում է ծառայություններն առանձին գործարքների շրջանակներում:

Խմբի գնահատմամբ ծառայությունների իրական արժեքները և առանձին վաճառքի գներն ընդհանուր առմամբ համապատասխանում են միմյանց: Այդ իսկ պատճառով, Խումբը չի ակնկալում, որ ՖՀՄՍ 15-ի կիրառումը կհանգեցնի էական տարբերությունների այս ծառայություններից ստացվող հասույթի ճանաչման ժամկետներում:

(ii) Միջնորդավճարներ

Վաստակած միջնորդավճարների հետ կապված Խումբը որոշել է, որ այն հանդես է գալիս որպես Գործակալ որոշակի գործարքների համար:

ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ գնահատումը կախված կլինի այն հանգամանքից, թե արդյոք Խումբը վերահսկում է որոշակի ապրանքները, նախքան դրանք վերջնական հաճախորդին փոխանցելը, այլ ոչ այն հանգամանքից, որ այն հանձն է առնում ապրանքների վաճառքի հետ կապված նշանակալի ռիսկերը և հատույցները:

Խմբի գնահատմամբ ՖՀՄՍ 15-ի կիրառումն էական ազդեցություն չի ունենա համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(iii) Անցումը նոր ստանդարտին

Խումբը պլանավորում է կիրառել ՖՀՄՍ 15-ը օգտագործելով կումուլյատիվ ազդեցության մեթոդը՝ ճանաչելով ստանդարտի սկզբնական կիրառման ազդեցությունը սկզբնական կիրառման ամսաթվին (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ին): Արդյունքում, Խումբը չի կիրառի ՖՀՄՍ 15-ի պահանջները ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող համադրելի ժամանակաշրջանի համար:

(գ) ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15-ը ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվին կամ դրանից առաջ կիրառելու պայմանով:

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Վարձակալը ճանաչում օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է էլակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

Խումբը գնահատում է ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: